ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1587-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2022 թվականի N ____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1587-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման հավելվածի 17-րդ կետի 8-րդ ենթակետում և Ձև 6-ի վերնագրում «կազմակերպության» բառը փոխարինել «փոխադրող» բառով.

2) 26-րդ կետում «իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը» բառերը փոխարինել «փոխադրողներ» բառով.

3) 27-րդ կետում «կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր» բառերը փոխարինել «փոխադրող» բառով.

4) 30-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«30. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեխնիկական զննություն անցած չլինելու դեպքում տրանսպորտային միջոցն ստանում է «0» գնահատական և հանվում մրցույթից:».

5) 33-րդ կետում, 35-րդ կետի 2-րդ ենթակետում և 40-րդ կետում «կազմակերպությունը» բառը փոխարինել «փոխադրողը» բառով.

6) 36.1-րդ կետում (բացառությամբ միջպետական, միջմարզային, ներմարզային, ներքաղաքային (բացառությամբ Երևան քաղաքի) երթուղիներով փոխադրումներ իրականացնող փոխադրողների, որոնք «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով արդեն իսկ վճարել են պետական տուրքը) բառերը և «Պետական տուրքը հաջորդող յուրաքանչյուր տարվա համար վճարվում է ոչ ուշ, քան առաջին տարվա համար պետական տուրքի վճարման ամսաթիվը նախադասությունը հանել.

6) 48-րդ կետում և ՁԵ 2-ի աղյուսակում կազմակերպությանը բառը փոխարինել փոխադրողին բառով.

7) ՁԵ 1-ի վերնագրում և տեքստում, ՁԵ 2-ի և ՁԵ 3-ի վերնագրերում, ՁԵ 10-ի աղյուսակի առաջին սյունակում կազմակերպությունների բառը փոխարինել փոխադրողների բառով.

8) ՁԵ 1-ի ցանկի 6-րդ կետում փակ ծրարով ներկայացվող՝ բառերը հանել.

9) ՁԵ 1-ի ցանկը լրացնել նոր 8-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

8) պարիտետ կողմի փոխադրողի հետ կնքված նախնական պայմանագիրը։

10) ՁԵ 3-ի աղյուսակի 3-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերում «Ծանոթագրություններ» սյունակում «նախկինում փոխադրող չհանդիսացող հայտատուն» բառերը փոխարինել վերջին մեկ տարվա ընթացքում միջպետական կանոնավոր ուղևորափոխադրում չիրականացրած փոխադրողը բառերով.

11) ՁԵ 9-ի վերնագրում փոխադրող կազմակերպությունների բառերը փոխարինել փոխադրողների բառով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. Փաշինյան